38. ԽԻՆԳՅ ԽԱՎՈՒ ԾՅՈՒ

Թաքավորին մեկ խեր ուր կնգյան կնստի, խինգյ խատ խավու ծյու կտնի ուրենց առճև, դալալ կուտա կանչել. «Վով գյա էսա խինգյ խսվու ծյուն զիկ, կնգյան էնան կիսողին իրեքյ հեսա խավասար կիսի, թաքավորության կես էնոր կուտամ»:

Ինչ կանդար ոզգա քյիբար, վազիր նազիր կան, մեյն էլ չեն կանա կիսի:

Ռամիկ մարթու մը մեկ կասի. «Ես կկիսեմ, տանեն թաքավորու իրիս»:

Կէրթա թաքավորու ծեռ կպաքյի, կասի. - Թաքավոր ապրած կենա, ես կկիսեմ իրեքյ հեսա:

Թաքավոր կասի. - Տե, որ չկառցար կիսիր, քյո վիզ կզանեմ:

Կասի. - Խա, որ չկառցա կիսի, իմ վիզ զարկ:

Մարթ կնստի: Թաքավոր խինգյ խատ խավու ծյու կտնի առաճ, կասի. - Տե կիսի:

Մարթ կառնի խինգյ խավու ծյուն, մեկ խավու ծյուն կտնի թաքավորու առաճ, մեկ կառնի ուր, իրեքյ խատ էլ կուտա թաքավորու կնգյան, ծեն չխանե, կնստի:

Թաքավոր կասի. - Ի՞նչ արիր, կիսի է, էսա էլավ կիսե՞լ:

Կասի. - Թաքավոր ապրած կենա, կիսիցի է խալալ, կիսիր եմ է:

Թաքավոր կասի. - Ի՞նչխ կիսիցիր, ասա հենքյ:

Կասի. - Թաքավոր ապրած կենա, երկու խատ խավու ծյու քյե կեր, մեկ հատ էլ տվի՝ քյե էլավ իրեքյ: Երկու խատ խավու ծյու զիկ կեր, մեկ խատ էլ առի զի՝ էլավ իրեքյ: Մեր երկրսին էլա՞վ բարեբար, քյո կնգյան իսկի խավու ծյու չկեր, իրեքյ խատ տվի էնոր՝ էլավ խեր մե բար, էլ ի՞նչ կուզես:

Թաքավոր կասի. - Քյո պաչխիշ ի՞նչ կուզես, աշխարի կես տա՞մ քյե:

Կասի. - Չէ, թաքավոր, զի շատ կանամ շախե, մնաց աշխար, քիչըմ փարա տուր, տանեմ քյո սայիցյ ապրեմ:

Թաքավոր էնոր բոլ-բոլամա փարա կուտա, կճամխի: